

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ ԱԿՑԵՊՏԱՎՈՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԿՆՔՎԱԾ՝  
«ԱՄԵՐԻԱՍԹՐԻՄ» ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 08.09.1992թ. որոշմամբ, գրանցման համար՝ 50, վկայական թիվ 0154), այսուհետ՝ **Կատարող**, ցանկացած ֆիզիկական անձի (այսուհետ՝ **Պատվիրատու**) առաջարկում է **իր հետ կնքել «Ամերիասթրիմ» դրամական փոխանցումների ծառայության մատուցման պայմանագիր** (այսուհետ՝ **Պայմանագիր**)՝ ստորև նշված պայմաններով, որոնք, համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի, հանդիսանում են Պատվիրատուներին ուղղված Օֆերտա (այսուհետ՝ **Առաջարկ**):

**1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

- 1.1. **Փոխանցում կամ «Ամերիասթրիմ» փոխանցում**՝ Պատվիրատուի կողմից իր Բանկային քարտից կամ ընթացիկ/քարտային հաշվից դրամական միջոցների փոխանցման գործարք, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվում Կատարողի կողմից տրամադրված Փոխանցման կողի կիրառմամբ՝ փոխանցված գումարը բանկումատից կանխիկ ստանալու համար:
- 1.2. **Ծառայություն**՝ Կատարողի կողմից տրամադրվող ծառայություն, որը հնարավորություն է տալիս Պատվիրատուին Ինտերֆեյսի միջոցով կատարել Փոխանցում՝ Պայմանագրով նախատեսված եղանակով և կարգով:
- 1.3. **Պատվիրատու**՝ սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան՝ փոխանցում կատարող ցանկացած անձ:
- 1.4. **Ստացող**՝ Փոխանցման կողը տնօրինող այն ֆիզիկական անձը, ով այդ կողը մուտքագրում է բանկումատի վրա՝ Փոխանցման գումարը ստանալու նպատակով: Ընդ որում, Ստացողը նույնականացվում է փոխանցման հայտում Պատվիրատուի կողմից նշված՝ Ստացողի հեռախոսահամարի տվյալի միջոցով:
- 1.5. **Ինտերֆեյս**՝ Պատվիրատուի և Ծառայության փոխգործողության միջոց՝ Կատարողի ինտերնետային կայքի կամ Ինտերնետ բանկ համակարգի կամ մոբայլ բանկինգի հավելվածի տվյալ ծառայության համար նախատեսված էջ: Ինտերնետային կայքի համապատասխան էջի հասցեն է՝ <https://ameriastream.ameriabank.am/transfer>:
- 1.6. **Թողարկող բանկ**՝ Բանկային քարտեր թողարկող, վճարային գործարքների վերաբերյալ տվյալներ ստացող և Պատվիրատուի հաշվից դրամական միջոցներ ելքագրող կամ Պատվիրատուի էլեկտրոնային դրամական միջոցների մնացորդը դեբետագրող ֆինանսական կազմակերպություն:
- 1.7. **Բանկային քարտ կամ Քարտ**՝ MasterCard WorldWide, VISA INTERNATIONAL միջազգային վճարային համակարգերի կամ ՀՀ ArCa (Armenian Card) վճարային համակարգի մագնիսական և/կամ չիպային վճարային քարտ կամ ֆիզիկական կրիչ չունեցող քարտ (անկանխիկ վճարումների գործիք), որը նախատեսված է Քարտապանի կողմից վերջինիս՝ Թողարկող բանկում ունեցած դրամական միջոցներով կամ Թողարկող բանկի տրամադրած վարկային միջոցներով կամ էլեկտրոնային դրամական միջոցներով ՀՀ օրենսդրությանը և

Թողարկող բանկի հետ կնքված պայմանագրին համապատասխանող գործարքներ իրականացնելու համար:

- 1.8. **Էքվայեր բանկ**՝ Ծառայության միջոցով կատարվող գործարքների շրջանակներում Պատվիրատուի կողմից իրականացվող վճարումների հետ կապված հաշվարկներ կատարող կամ հաշվարկների կատարմանը մասնակցող ֆինանսական կազմակերպություն: Թողարկող բանկը և Էքվայեր բանկը նույնանուն են, երբ փոխանցումն իրականացվում է Կատարողի կողմից թողարկված քարտերով:
- 1.9. **Առաջարկ**՝ սույն Պայմանագրի (փաստաթղթի) դրույթները, որոնք Կատարողը առաջարկում է Պատվիրատուին: Պատվիրատուի կողմից Առաջարկի ընդունումը վերաճում է Առաջարկի դրույթները երկկողմանիորեն պարտավորեցնող պայմանագրային դրույթների, որոնք ենթակա են բարեխիղճ կատարման համապատասխան Կողմի (Կողմերի) համար:
- 1.10. **Պայմանագիր**՝ սույն փաստաթղթում արտացոլված Կատարողի Առաջարկը, որն ընդունվել է (ակցեպտավորվել է) Պատվիրատուի կողմից:
- 1.11. **Կողմեր**՝ Պայմանագրի կողմեր՝ Կատարող և Պատվիրատու:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 2.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է վարձատրության դիմաց Պատվիրատուին տրամադրել «Ամերիաբանկ» դրամական փոխանցումների մատուցման ծառայություն՝ սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին՝ սույն Պայմանագրով նախատեսված չափով և կարգով:

## 3. ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՈՒԺՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

- 3.1. Պայմանագիրը կնքվում է Կատարողի Առաջարկը Պատվիրատուի կողմից ակցեպտավորելու (ընդունելու, համաձայնելու) միջոցով:
- 3.2. Կողմերի միջև պայմանագրային պարտավորություններն առաջանում են Պատվիրատուի կողմից Կատարողի՝ Ինտերֆեյսում տեղակայված Առաջարկն ամբողջությամբ և անվերապահ ընդունելու ուժով:
- 3.3. Կատարողի Ինտերնետ բանկ համակարգի/մոբայլ բանկինգի հավելվածի միջոցով կատարվող Փոխանցման դեպքում Փոխանցողի հետ իրավահարաբերությունները կանոնակարգվում են ինչպես Պայմանագրի, այնպես էլ Բանկի հիմնական պայմանների<sup>1</sup> դրույթների համաձայն:
- 3.4. Ինտերֆեյսում տեղակայված Առաջարկն ընդունելուց առաջ Պատվիրատուն պարտավոր է մանրակրկիտ ծանոթանալ Առաջարկի բոլոր դրույթների հետ և դրանց հետ ամբողջությամբ համաձայն լինելու դեպքում նոր միայն սեղմել **«Ընդունում եմ պայմանները»** նշումը:

<sup>1</sup> «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ /11RBD RL 72-01-01/ (հաստատվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ) [www.ameriabank.am](http://www.ameriabank.am) - Թափվող մենյու - ֆիզիկական անձ հաճախորդներին - Բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ:

- 3.5. Մեղմելով «ընդունում եմ պայմանները» նշումը՝ Պատվիրատուն հաստատում է, որ ծանոթացել և համաձայնել է Առաջարկի բոլոր դրույթների հետ և պարտավորվում է կատարել Առաջարկի՝ իրեն վերաբերելի դրույթները:
- 3.6. Առաջարկի որևէ դրույթի հետ համաձայն չլինելու դեպքում Պատվիրատուն պարտավորվում է չսեղմել «ընդունում եմ պայմանները» նշումը և չկատարել Փոխանցումը:

#### 4. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՀՄԱՆԱՓՎԿՈՒՄՆԵՐԸ

- 4.1. Փոխանցման կատարման արժույթը ՀՀ դրամն է՝ անկախ Պատվիրատուի Քարտի կամ հաշվի արժույթից:
- 4.2. Պատվիրատուն Կատարողի կայքի միջոցով կարող է Փոխանցում կատարել MasterCard WorldWide, VISA INTERNATIONAL կամ ArCa վճարային քարտերով:
- 4.3. Պատվիրատուի համար մեկ փոխանցման գումարային սահմանաչափերը, ինչպես նաև Ստացողի համար Փոխանցումների ստացման գումարային սահմանաչափերը սահմանվում են Կատարողի Սակագներով<sup>2</sup>:
- 4.4. Փոխանցման գումարը կարելի է ստանալ մեկ անգամ և ամբողջությամբ: Գումարի տրոհումը ստանալու պահին հնարավոր չէ:
- 4.5. Փոխանցումների իրականացման ընթացքում կարող են կիրառվել կատարվող Փոխանցումների քանակի և գումարի այլ սահմանափակումներ՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը, MasterCard WorldWide և VISA INTERNATIONAL միջազգային վճարային համակարգերի և ArCA վճարային համակարգի կանոնները, Էքվայեր բանկերի պահանջներն ու Ծառայության տեխնիկական հնարավորությունները, ինչպես նաև Թողարկող բանկի կամ Կատարողի կանոնները կամ պայմանագրային դրույթները:
- 4.6. Կատարողի կողմից ընդունված այլ սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունները Պատվիրատուի համար հասանելի են Ինտերֆեյսում նախքան Փոխանցման իրականացումը:
- 4.7. Պատվիրատուի քարտը թողարկած բանկը կարող է սահմանել լրացուցիչ պայմաններ կամ սահմանափակումներ գործարքների տարբեր տեսակների համար: Նման սահմանափակումների մասին Կատարողը Պատվիրատուին տեղեկացնելու որևէ պարտավորություն չի կրում, և նման սահմանափակումների համար Կատարողը պատասխանատվություն չի կրում:
- 4.8. Պատվիրատուն կարող է կատարել Փոխանցում, եթե Կատարողն ունի դրա կատարման տեխնիկական հնարավորություն: Տեխնիկական հնարավորության բացակայության

<sup>2</sup> «Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար /11RBD PL 72-01-01/ (հաստատվել է Բանկի Տնօրինության 27.05.2015թ. թիվ 03/59/15 որոշմամբ) [www.ameriabank.am](http://www.ameriabank.am) - Թափվող մենյու -- ֆիզիկական անձ հաճախորդներին – Հաշիվների բացում և սպասարկում – Լրացուցիչ տեղեկատվություն

«Ամերիաբանկ» ՓԲԸ Քարտերի սակագներ /11RBD PL 72-56/ (ընդունվել է Բանկի Տնօրինության 29.07.2015թ. թիվ 02/20/15 որոշմամբ): Հղումը՝ [www.ameriabank.am](http://www.ameriabank.am) - Թափվող մենյու - Ֆիզիկական անձ հաճախորդներին – Քարտեր – Կրեդիտային քարտեր – Լրացուցիչ տեղեկատվություն

դեպքում Կատարողն իրավունք ունի մերժել Փոխանցման իրականացումը՝ այդ մասին տեղեկացնելով Ինտերֆեյսի միջոցով:

## 5. ԿԱՏԱՐՈՂԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

- 5.1. Կատարողը պարտավորվում է Ծառայությունը տրամադրել Պատվիրատուին Կատարողի Սակագներով<sup>3</sup> սահմանված վարձատրության դիմաց, որը վճարվում է Պատվիրատուի կողմից Փոխանցման կատարման ժամանակ:
- 5.2. Եթե Պատվիրատուի քարտը թողարկված է Փոխանցման արժույթից տարբեր արժույթով, Թողարկող բանկի կողմից և/կամ MasterCard WorldWide, VISA INTERNATIONAL միջազգային վճարային համակարգերի և/կամ ArCA (Armenian Card) կանոններով կարող են գանձվել արժույթների փոխարժեքով պայմանավորված և փոխանակումից (փոխարկումից) բխող այլ վճարների գանձումներ, և դրանց հետ կապված Պատվիրատուն չի կարող որևէ պահանջ ներկայացնել Կատարողին:
- 5.3. Փոխանցումը 6.6 կետով սահմանված ժամկետում Ստացողի կողմից չստանալու դեպքում Կատարողը Պատվիրատուից ծառայության դիմաց վարձատրություն չի գանձում:

## 6. ՓՈՒԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- 6.1. Փոխանցման կատարման համար Պատվիրատուն պարտավոր է լրացնել Ինտերֆեյսում տեղադրված Փոխանցման համար անհրաժեշտ պարտադիր տեղեկատվությունն ամբողջությամբ:
- 6.2. Պատվիրատուն պատասխանատվություն է կրում իրեն և Ստացողին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների, ինչպես նաև գործարքի տվյալների, մասնավորապես՝ Փոխանցման գումարի, Պատվիրատուի և Ստացողի հեռախոսահամարների ճշգրիտ լրացման համար:
- 6.3. Պատվիրատուի կողմից Փոխանցման համար բոլոր անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարվելուց հետո Կատարողը Պատվիրատուին ուղարկում է փոխանցման կող (այսուհետ՝ Փոխանցման կող), որն անհրաժեշտ է լինելու Ստացողին Կատարողի բանկումատից գումարի կանխիկացման համար: Ընդ որում՝ կայքի միջոցով կատարվող Փոխանցման դեպքում Փոխանցման կողն ուղարկվում է Պատվիրատուի հեռախոսահամարին հաղորդագրության միջոցով, իսկ Ինտերնետ բանկ համակարգով/մոբայլ բանկինգի հավելվածով կատարվող Փոխանցման դեպքում Փոխանցման Կողը հասանելի է դառնում Ինտերնետ բանկ համակարգում/մոբայլ բանկինգի հավելվածում:

<sup>3</sup> «Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար /11RBD PL 72-01-01/ (հաստատվել է Բանկի Տնօրինության 27.05.2015թ. թիվ 03/59/15 որոշմամբ) [www.ameriabank.am](http://www.ameriabank.am) - Թափվող մենյու -- ֆիզիկական անձ հաճախորդներին – Հաշիվների բացում և սպասարկում – Լրացուցիչ տեղեկատվություն

«Ամերիաբանկ» ՓԲԸ Քարտերի սակագներ /11RBD PL 72-56/ (ընդունվել է Բանկի Տնօրինության 29.07.2015թ. թիվ 02/20/15 որոշմամբ): Հղումը՝ [www.ameriabank.am](http://www.ameriabank.am) - Թափվող մենյու - Ֆիզիկական անձ հաճախորդներին – Քարտեր – Կրեդիտային քարտեր – Լրացուցիչ տեղեկատվություն

- 6.4. Կատարողի կողմից Պատվիրատուին ուղարկված Փոխանցման կողը Ստացողին տրամադրվում է Պատվիրատուի կողմից և վերջինիս հայեցողությամբ:
- 6.5. Փոխանցման կողը Ստացողի կողմից Կատարողի բանկոմատի վրա ճիշտ մուտքագրելուց հետո Կատարողը նույն պահին Փոխանցման հայտում լրացված՝ Ստացողի հեռախոսահամարին ուղարկում է մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ, որը ևս անհրաժեշտ է մուտքագրել բանկոմատի վրա: Մեկանգամյա օգտագործման գաղտնաբառը բանկոմատի վրա ճիշտ մուտքագրելուց հետո Կատարողը նույն պահին Փոխանցման գումարը բանկոմատի միջոցով հասանելի է դարձնում Ստացողի համար՝ տրամադրելով այն կանխիկ եղանակով:
- 6.6. Փոխանցման գումարի ստացման համար սահմանվում է Փոխանցման կատարման պահից 48 ժամ:
- 6.7. Փոխանցումը կարելի է ստանալ կանխիկ՝ ՀՀ տարածքում Կատարողի բանկոմատից միայն թղթադրամներով:
- 6.8. Փոխանցումը ենթակա չէ չեղարկման: Փոխանցման գումարը 6.6 կետում սահմանված ժամկետում չստանալու դեպքում Փոխանցման կողն ապասկտիվանում է, և ամբողջ գումարը կրկին հասանելի է դառնում Պատվիրատուին:
- 6.9. Կատարողի կայքի միջոցով կատարվող Փոխանցման դեպքում Պատվիրատուի կողմից Ծառայության օգտագործմամբ Փոխանցում իրականացնելու փաստը Պատվիրատուի կողմից վիճարկվելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է դիմել ըԹողարկող բանկին:
- 6.10. Պատվիրատուն հաստատում է, որ Ինտերֆեյսի միջոցով դրամական միջոցների ելքագրման իր հանձնարարականի ներկայացման փաստը Պատվիրատուի՝ նշված միջոցներով Փոխանցում կատարելու մտադրության անվիճելի ապացույց է:
- 6.11. Փոխանցման կատարման համար անհրաժեշտ տվյալները և տեղեկությունները Ինտերֆեյսում Պատվիրատուի կողմից պատշաճ լրացնելուց հետո Կատարողը Պատվիրատուին տրամադրում է գործարքը հավաստող էլեկտրոնային անդորրագիր:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- 7.1. Պայմանագիրը գործում է մինչև այն պահը, երբ Կողմերը պատշաճ կատարում են իրենց ստանձնած բոլոր պարտավորությունները:

## 8. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

- 8.1. Պատվիրատուի կողմից տրամադրվող տեղեկությունների պաշտպանության համար Կատարողը կիրառում է գաղտնագրման արդյունաբերական չափանիշներ՝ մասնավորապես՝ անվտանգ միացումների (SSL) տեխնոլոգիան, ինչպես նաև ինտերնետ միջավայրում վճարային քարտերով փոխանցումների անվտանգությունը ապահովող Master Card Secure Code և VISA Verified by Visa (VbV) տեխնոլոգիաները: Այդուհանդերձ, Պատվիրատուն գիտակցում է, որ գործնականորեն անհնար է ապահովել բացարձակ անվտանգություն ինտերնետ միջավայրում գործարքներ իրականացնելիս և նման միջավայրում գործարքներ կատարելուց բխող բոլոր հնարավոր ռիսկերը կրում է Պատվիրատուն ինքը:
- 8.2. Կատարողի կայքի միջոցով Փոխանցում կատարելու համար քարտի CVV եռանիշ ծածկագիրը պարտադիր է:

- 8.3. Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում ինտերնետային միջավայրում Պատվիրատուի տվյալների հասանելիության կամ ապօրինի օգտագործման համար՝ երրորդ անձանց կողմից:
- 8.4. Կատարողը պարտավոր է պահպանել Պատվիրատուի վերաբերյալ իրեն հասանելի տեղեկությունները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 8.5. Պատվիրատուն տալիս է իր համաձայնությունը իրեն վերաբերող տվյալների մշակման և երրորդ անձանց փոխանցմանը, եթե դա անհրաժեշտ է՝
  - 8.5.1. Փոխանցման կատարման համար.
  - 8.5.2. Կատարողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար.
  - 8.5.3. Պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար.
  - 8.5.4. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ երրորդ անձանց տրամադրման համար:

### 9. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 9.1. Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման համար՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:
- 9.2. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե տվյալ կողմի համար դա եղել է անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) ազդեցության հետևանք, որ ծագել են սույն պայմանագրի կնքելուց հետո արտակարգ իրավիճակային իրադարձությունների արդյունքում, որ կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

### 10. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 10.1. Սույն Պայմանագրից կամ Առաջարկից բխող բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հայցվորի ընտրությամբ՝
  - 10.1.1. կա՛մ, ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից,
  - 10.1.2. կա՛մ, պատասխանողի գտնվելու ՀՀ համապատասխան դատարանի կողմից, եթե պատասխանողը գտնվում և բնակվում է ՀՀ տարածքում:
- 10.2. Սույն Պայմանագրից բխող վեճերը լուծվում են բացառապես ՀՀ օրենսդրության հիման վրա:
- 10.3. Ինտերֆեյսի օգտագործման հարցերի դեպքում Պատվիրատուն կարող է դիմել Հաճախորդների սպասարկման կենտրոն (+374 10) 56 11 11 հեռախոսահամարով: